

**Տ. ԱՌԱՋԵԼ ԵՂԻՍԿՈԴՈՄ ՔԱՐԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ
(9 փետրվարի 2003 թ.)**

**«Եկայք շինեցուք սուրբ զիտրանն լուսոյ»:
(Չարակինց)**

«Յանուն Նօր և Որդույ և Հոգույն Սրբոյ. ամէն»:

Միջնական հավաքավոր ժողովուրդ.

Ինչպես արդեն ասվեց, այս տարի հանդիսավորապես նշվելու է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակը: Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Վեհափառ Նայրապետի սրբագրական կոնդակով այն նշվելու է ողջ 2003 թ. ընթացքին, և այդ պատճեն առիթով մենք, Կողայքի հավաքավոր ժողովուրդի հետք, Կողայքի մարզային և քաղաքային իշխանությունների հետք՝ գլխավորությամբ մարզպետ պետ Կովկասներ Շահգելյանի, եկել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին մեր ուսուր կարարելու՝ բերելով նաև մեր հավաքարմությունն ու նվիրումը Նորին Սրբությանը:

Միջնական հավաքագյալ ժողովուրդ, ասդվածային գործերն անընին են և նրանք բարձր են երկնքի պես, խորուն և անմնկնելի: Այդպիսին էր Միածնի էջը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Վաղարշապատ քաղաքը: Այդ ժամանակ բազմաթիվ ազգեր և ժողովուրդներ կային, որոնք ավելի մեծ ու ավելի հզոր էին, բայց Միածնը իշավ հայոց փոքր ածուի մոտ: Ո՞վ իշեցրեց իր աղոթքներով, ո՞վ իշեցրեց իր փառապանքներով Միածնին Արարագյան աշխարհի: Այս էջը կարարվեց շնորհիկ մեր հավաքու հայր Ս. Գրիգոր Լուսավորչի: Նրա՝ մեկը մյուսից սարսապեր չարչարանքները հասան երկինք, մինչև Միածնի երկնային գահը:

Միածնը բազմաթիվ մարդիրուսների չարչարանքներ էր փեսել, բայց Լուսավորչի չարչարանքը զերազանցում էր բոլորին, նրա չարչարանքը առանձնակի զնակարանքի էր արժանի: Եվ երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը Խոր Վիրապի մեջ 14 երկար փարիներ փառապելուց հետո դուրս եկավ, քարոզեց Քրիստոսի Ավետարանը, բժշկեց Տրդագր թագավորին և, ինչպես Ազարանգեղոս պատմին է Ներկայացնում Լուսավորչի՝ Մայր Տաճարի հետ կապված դիմումը, թե՝ «Երբ ժողովուրդը հսկումից հոգնած ննջում էր, ես իմ աղոթքն էր առաքում առ Աստված, երկինքը բացվեց, և երկնքից իշավ մի լուսադեմ մարդ, որը ձայն փվեց՝ «Ո՞վ Գրիգոր»: Ես վեր նայեիք և սարսափահար գնդին ընկա: Այդ ձայնը նորից կրկնվեց և ասաց. «Բարձրացրու աչքերդ և փես այն սքանչելիքը, որ ցոյց եմ դպիս քեզ»:

Մեր հավաքու հայրը, աչքերը երկինք հառած, փեսակ Միածնին Որդուն, որ ուկե մուրճը ձեռքին իշավ Վաղարշապատ քաղաք և այդ ուսի մուրճով երեք անգամ հարվածեց հեթանոսական փաճարի փեղում, փակեց դժոխքի դրները և ցոյց փվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցման վայրն ու ասաց. «Անս այսրեղ կառուցեք Իմ եկեղեցին»: Այս փեսիթի հիման վրա Ս. Գրիգոր Լուսավորիչը երավեր կարդաց հայ ժողովորդին՝ ասելով, թե՝ «Եկայք

շինեսցուք սուրբ զիտրանն լուսոյ». Եկեք միասնաբար կառուցենք իմանալի Լուսի Սուրբ Խորանը:

Այդ հրամանը ասդվածային հրաման էր, որի առջև խոնարիվեց և՝ խրոխսր թագավորը, և՛ ռամիկը, և՛ իշխանը: Թուրող ականջալուր լինելով Ս. Գրիգորի այս հորդորին՝ Մասիսի փեշերից քարեր բերեցին և հիմնեցին այս գեղագիտական Տաճարը: Ասդված դիեսավ, հավանեց այն ու եկավ և բնակվեց այս Տաճարի մեջ: Տերն ասաց Սուրբ Գրիգորին. «Զօ Աթոռ հիմնիր այսպես և որպես Իմ փոխանորդ՝ դեր և պաշտպան եղիր հայ ժողովրդին»: Հոգվեց Գրիգոր Լուսավորիչը՝ ասելով, թե ինքը դիկար է, ինչպես կարող է դեր և պաշտպան լինել հայոց ազգին:

Լուսավորչի աջքերից արցունքներ հոսեցին, բայց Ասդօն հրեշտակները յթողեցին, որ այդ արցունքները գետին ընկնեն: Նրանք հավաքնեցին այդ արցունքները մի կանթեղի մեջ և երկինք փարան: Ասդված ընդունեց Ս. Գրիգորի սրբարձուխ զիհաքներությունները և այդ կանթեղը երկնքից կախեց Վրազածի գազաթին՝ ասելով, որ այն թող պահապան լինի հայ ժողովրդին: Տերն ասաց Ս. Գրիգորին. «Ասդված դիկար մարդկանց միջոցով է երաշքներ կարող է գործել: Բայց որպեսզի քո ազգն իրեն ավելի ապահով գգա, ահա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ահա լուսի կանթեղը, ահա Տրդադի սուրբ: Այս բոլորը թող պահապան լինեն հայոց աշխարհին»:

Սիրելի հավարավոր ժողովուրդ, դեռ չեն չորացել Մայր Տաճարի որմերի շաղախները, երբ նրա հիմքերը փորձելու եկավ հեթանոս կայսր Մաքսիմիանոսը: Նա փորձեց գալ մինչև Վաղարշապատ, բայց չկարողացավ խոնարհեցնել այդ գեղագիտական Տաճարը. հանդիպեց Մայր Աթոռի կանթեղի լուսին, Գրիգոր Լուսավորչի կանթեղի լուսին, Տրդադի սրբին և այդ սրբությունների հետին կանգնած հայոց գորքերին և ամորահար հեռացավ Հայոց աշխարհից: Ասդօն ողորմությունը մեծ էր հայ ազգի համար:

Հայոց մեջ ծնվեց մի այր՝ Մաշփոց անունով, որը հասակ առավ, եկավ Մայր Աթոռ ուխտի, բարձրացավ Վրազած ուխտի, վառեց Լուսավորչի կրակը և ջակը ձեռքին շրջեց Հայոց աշխարհով՝ Հայաստանի արևելքից մինչև արևմուտք, հյուսիսից հարավ և հայոց օջախների կանթեղները վառեց իմանալի լուսով, քրիստոնեական լուսով: Բայց այդ անաղարդը ու քրիստոնյա երկիրն պահելու պաշտպաններ էր պետք, ինչի համար Մեսրոպը մեկ ուրիշ եղը գրավ՝ հայոց 36 փառերը, և այդ գրերը որպես մեկական գինվորներ գետեղնեց ողջ Հայոց աշխարհի սահմանների երկայնքով:

Եազերդ արքան դիեսավ այս ամենն ու ասաց. «Մայր Աթոռը և Լուսավորչի կանթեղը մոխիրների մեջ պիտի թաղեն»: «Չե՞ս կարող,- ասաց Վարդան զորավարը,- անհնար է հոգնոր լուսը մոխիրների մեջ թաղել»: Եվ հանելով իր սուրբ՝ արժանի հարված դրվեց թշնամուն:

Եկավ Մսրա Մելիքը և ասաց. «Դիմիք իսակարեցնեմ Մայր Աթոռի լուսը և Լուսավորչի կանթեղը»: Սաստնցի Դավիթը խաչակնքեց և նորից արժանի հարված դրվեց նրան:

Եկավ Զինգիկ Խանն իր արյունուշը հորդաներով, ավեր սփռեց, սրադեց հայ ժողովրդին, բայց հայ ազգը դրվագ իր Լուսավորչի նման և փյունիկ թռչունի պես հարություն առավ:

Եկավ Լենկ Թեմուրին իր հրոսակներով, արյան ծովի վերածեց Հայոց աշխարհը, բայց նորից մեր ժողովուրդն իր Լուսավորչի նման գոլկաց, որքի կանգնեց, կառուցեց և շնչող դացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Հայոց աշխարհը:

Եկավ Շահ Աքբասն իր անողոք զորքերով, կորորեց հայ ժողովորդին, Արարավյան դաշտավայրի բնակչությանը գերեվարեց, խավարեցրեց Մայր Աթոռի լույսը, սակայն հայ ժողովուրդը կրկին գոլկաց իր Լուսավորչի պես և որքի ելնելով՝ կառուցեց իր լունը և վերապայծառացրեց իր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Եկան նոր ժամանակներ, Լուսավորչի հաջորդներին, սակայն, իրենց նախորդների ճակարտագիրն էր սպասվում. հայության ինքնությանը վկանգ էր սպասնում: Իմացավ Անդրանիկ զորավարը, հեծավ իր սպիտակ ձին և հայ քաջերի հետ միասին ասպարեզ հօալ պաշտպանելով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը. Լուսավորչի կանթեղը և այն փոխանցեց մնաց, որպեսզի մենք է աչքի լույսի պես պահենք, փայփայենք, և փոխանցենք մեզնից հետո եկող սերունդներին:

Սիրելի հավատավոր ժողովուրդ, Մենք ունենք Ս. Էջմիածին, որի գլխավերևուս պլայում է Լուսավորչի կանթեղը, կանթեղի հեղեկում փայփայում են հայ հերոսների սրերը: Դարեր կան ու դարեր կանցնեն, բայց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հավերժ կմնա, հավերժ իր քարեղեն գոյությամբ, ինչպես և իր ոգեղեն զորությամբ, և այդ զորությունը Աստծո Ամենազոր Աջի հետ միասին թող հովանի լինի մեր Եկեղեցուն և մեր ժողովորդին: